

Պարոն գեներալ-լեյտենանտ
տիկնայք և պարոնայք

Թույլ տվեք ներկայացնել առաջին աշխատանքային խմբի
աշխատանքների արդյունքները ՊՆ քաղաքացականացման և
անձնակազմի կառավարումը թեմայի վերաբերյալ:

Աշխատանքներն իրականացվել են աշխատանքային խմբի 4 նիստերի
ընթացքում հետևյալ կարգով.

Նախ խնդիր է դրվել հստակեցնել ՊՆ և ՋՈՒ ԳՇ կառուցվածքը:

Այդ նպատակով քննության է առնվել ներկայացված սխեմայի
կենտրոնում նշված վարչությունների գործառույթները և ելնելով նրանց
խնդիրներից որոշվել է նրանց ենթակայությունը: Համապատասխան
հիմնավորումների արդյունքում դրվել է կամ պաշտպանության
նախարարության կամ զինված ուժերի գլխավոր շտաբի ենթակայության
տակ:

Այսպես.

1. թիկունքի վարչություն - ԳՇ,
2. անձնակազմի հետ տարվող աշխատանքների վարչություն - ԳՇ,
3. կապիտալ շինարարության և ՋԲ վարչություն – ՊՆ,
4. ՌՈ վարչություն – նոր ընդունված օրենքի համաձայն այն
ենթարկվում է ՊՆ-ին, հետագայում ՊՆ ցանկությամբ կարող է
առանձնացվել դառնալ առանձին ստորաբաժանում,
5. զինկոմիսարիատներ – ՊՆ,
6. ՌԱՎ – ՊՆ,

7. կադրերի և ՌԿ վարչություն – ՊՆ,
8. կենտրոնական ռազմաբժշկ. հանձնաժողով – ՊՆ,
9. ռազմաբժշկական վարչություն - ԳՇ,
10. սպառազինության վարչություն - ԳՇ,
11. գնումների բաժին – ՊՆ:

Այսպիսով հստակեցվել են ՊՆ և ԳՇ կառուցվածքը:

Հետագա քննարկումների նպատակ են հետապնդել հստակեցնել, թե որ վարչություններում հնարավոր քաղաքացիական տարրի ներդրում և ինչ չափով՝ ամբողջությամբ, թե մասամբ կամ խառը, այսինքն և քաղաքացիականներ և զինվորականներ:

Թույլ տվեք ներկայացնել այս քննարկումների արդյունքները ըստ վարչությունների.

1. ԱՀ և ՌՀ – կարող է մասամբ համալրվել քաղծառայողներով,
2. ՖԲ և Պ - ամբողջությամբ քաղծառայող,
3. տեղեկատվության վարչություն - ամբողջ. քաղծառայող,
4. Սոցապ. վարչություն - ամբողջությամբ քաղծառայող,
5. իրավաբանական վարչություն – մասամբ,
6. կադրեր և ՌԿ վարչություն – մասամբ,
7. ԿՇ և ԶԲ վարչություն - ամբողջությամբ,
8. զինկոմիսարիատներ – մասամբ,
9. ռազմարդյունաբերական վարչություն – մասամբ,
10. կենտրոնական բժշկական հանձնաժողով - ամբողջությամբ:

Սրանք էին մեր քննարկումների արդյունքները շնորհակալություն: